

Սոցիալական ապահովության նպաստնե՞ր եք ստանում: Մտահո՞գ եք, թե ինչ կպատահի Ձեր նպաստների հետ, երբ աշխատեք:

Եթե Դուք ստանում եք սոցիալական ապահովության լրացուցիչ եկամուտ (Supplemental Security Income, SSI) և (կամ) սոցիալական ապահովագրություն աշխատունակության կորստի դեպքում (Social Security Disability Insurance, SSDI), ապա աշխատանքային գործունեության խթանման և աշխատանքի տեղավորման աջակցության միջոցների վերաբերյալ փաստերի իմացությունը թույլ կտա վերահսկել Ձեր ֆինանսներն ու առողջության խնամքը աշխատանքի և ֆինանսական անկախության անցնելու շրջանում:

Միա՛ փաստե՛ր:

ՀՈՐԻՆՎԱԾՔՆԵՐ.

- Եթե գնամ աշխատանքի, կկորցնեմ իմ դրամական նպաստները
- Եթե գնամ աշխատանքի, կկորցնեմ իմ Medi-Cal կամ Medicare նպաստները
- Եթե գնամ աշխատանքի և այն դադարեցնեմ իմ անաշխատունակության պատճառով, այլևս չեմ կարողանա նպաստներ ստանալ

ՓԱՍՏԵՐ.

- Գոյություն ունեն աշխատանքի տեղավորման աջակցության միջոցներ, որոնք երաշխավորում են, որ ժամանակից շուտ չեք զրկվի դրամական նպաստներից
- Medi-Cal և Medicare ծրագրերը հատկապես նախատեսված են հաշմանդամություն ունեցող մարդկանց համար, ովքեր աշխատում են
- Եթե ստիպված եք հաշմանդամության պատճառով դադարեցնել աշխատելը, կարող եք վերականգնել Ձեր նպաստներն առանց նոր դիմումի

Գիտե՛ք արդյոք:

- Դուք կարող եք մինչև **\$59892** վաստակել այս տարի (2015) և ստանալ Medi-Cal նպաստներ: **Medi-Cal-ի «Աշխատող հաշմանդամներ» ծրագրի միջոցով ԿԱՐՈ՛Ղ ԵՔ՝**
- շարունակել Medicare ստանալ աշխատելու ընթացքում.
- հնարավորության դեպքում պահել Medi-Cal և (կամ) Medicare նպաստները, ինչպես նաև Ձեր անհատական բժշկական ապահովագրությունը:

Ուզո՞ւմ եք ավելին իմանալ: Նպաստների պլանավորման համար նախատեսված ռեսուրսների մասին խոսեք Ձեր խորհրդատուի հետ կամ դիմեք «Աշխատանքային գործունեության խթանման միջոցների պլանավորում և աջակցություն» (Work Incentives Planning and Assistance, WIPA) նախագծի գրասենյակ:

«Աշխատանքի տոմս» ծրագրի վերաբերյալ կոնկրետ տեղեկատվություն ստանալու համար Ձեր խորհրդատուից խնդրեք DOR-ի «Շահառուի ամփոփաբերթ «Աշխատանքի տոմս» ծրագրի վերաբերյալ»:

Մենք աջակցում ենք Ձեր ուղևորությունը դեպի ֆինանսական անկախություն:

Դուք, երևի, լսել եք այս խոսքը. «*դու կկորցնես քո դրամական նպաստները, եթե գնաս աշխատելու*»: Սա տարածված թյուրըմբռնում է: Իրականում, Սոցիալական ապահովագրության վարչությունն ունի աշխատանքի տեղավորման աջակցության և աշխատանքային գործունեության խթանման միջոցներ, որոնց նպատակն է Ձեզ օգնել անցում կատարել դեպի աշխատանքի և ինքնուրույնության աշխարհ՝ առանց Ձեր նպաստներից վաղաժամ գրկվելու:

SSI աշխատանքի տեղավորման աջակցության և աշխատանքային գործունեության խթանման միջոցներ

- Հանումներ հարկվող ընդհանուր և վաստակած եկամտից
- Առողջական վիճակի վատթարացման հետ կապված աշխատանքային ծախսեր (Impairment Related Work Expenses, IRWEs)
- Կույրերի աշխատանքային ծախսեր (Blind Work Expenses, BWEs)
- Ինքնապահովման հասնելու պլան (Plan to Achieve Self-Support, PASS)
- Հանումներ ուսանողի վաստակած եկամտի հարկվող գումարից (Student Earned Income Exclusion, SEIE)
- Medi-Cal 1619B

SSDI աշխատանքի տեղավորման աջակցության և աշխատանքային գործունեության խթանման միջոցներ

- Աշխատանքային փորձաշրջան (Trial Work Period, TWP)
- Իրավունակության երկարացված ժամանակաշրջան (Extended Period of Eligibility, EPE)
- Արտոնյալ ժամանակաշրջան
- Առողջական վիճակի վատթարացման հետ կապված աշխատանքային ծախսեր (Impairment Related Work Expenses, IRWEs)
- Դրամական հատկացումներ և հատուկ պայմաններ
- Աշխատանքի անհաջող փորձ (Unsuccessful Work Attempt, UWA)
- Միջինացում
- Medicare նպաստներ հաշմանդամություն ունեցող անձանց համար, ովքեր աշխատում են
- Medicare նպաստների շարունակություն

Աշխատանքի տեղավորման աջակցության և աշխատանքային գործունեության խթանման միջոցներ և SSI-ի, և SSDI-ի համար.

- Բաժին 301. Շարունակական վճարում մասնագիտական վերականգնման ծրագրի կամ նմանատիպ ծրագրի շրջանակներում
- Նպաստների արագացված վերականգնում (Expedited Reinstatement, EXR)
- Աշխատանքի տոմս (Ticket to Work, TTW)
- Medi-Cal-ի «Աշխատող հաշմանդամներ» ծրագիր

Աշխատանքի տեղավորման աջակցության և աշխատանքային գործունեության խթանման միջոցների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար այցելեք

[Disability Benefits 101](http://www.DisabilityBenefits101.org) (www.DisabilityBenefits101.org)

[Ticket to Work](http://www.ChooseWork.net) (www.ChooseWork.net)

[The Red Book](http://www.SSA.gov/redbook) (www.SSA.gov/redbook)

Եթե հետաքրքրված եք աշխատանքային գործունեության խթանման միջոցների վերաբերյալ վեբինարների օգտվելու հնարավորությամբ, այցելեք

[Talent Knows No Limits](http://TalentKnowsNoLimits.com/webinar.html) (TalentKnowsNoLimits.com/webinar.html)